

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐՈՎԱՐՏԱԿ

20 Հոկտեմբերի

ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՑ ՄԵՆՔ ՆԻԿՈԼԱՅ ԵՐԿՐՈՐԴ ԿԱՅՍՐ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ, ԹԱԴԱՒՈՐ ԼԵՀԱՍՏԱՆԻ, ՄԵԾ ԻՇԽԱՆ ՖԻՆԼԵԱՆԴԻԱՅԻ *և այլն, և այլն, և այլն,*

յայտարարում ենք Մեր բոլոր հաւատարիմ հպատակներին.

Ռուսաստանի դէմ ցարդ վարած անյաջող կռուի մէջ ձգտելով ամեն տեսակ միջոցներով բաղմապատկել իրենց ոյժերը, Գերմա-

նիան և Աւստրօ-Ունգարիան դիմեցին օսմանեան կառավարութեան օգնութեան և իրենց ձեռքով կուրացրած Թիւրքիային մղեցին դէպի պատերազմ մեր դէմ։ Թրքական նաւատորմիղը գերմանացիների առաջնորդութեամբ համարձակուեց դաւաճանօրէն յարձակուել մեր Սև ծովի ափի վրայ։ Սրանից անմիջապէս յետոյ Մենք Պոլսի ռուսաց դեսպանին հրամայեցինք դեսպանատան և հիւպատոսական բոլոր պաշտօնեաների հետ հեռանալ Թիւրքիայի սահմաններից։ Կատարեալ հանգստութեամբ և Աստուծոյ օգնութեանն ապաւինելով կընդունի Ռուսաստանը քրիստոնէական հաւատի և բոլոր սլաւոն ժողովուրդների հին հալածչի կողմից իր դէմ եղած այս նոր արշաւանքը։ Առաջին անգամը չէ, որ ռուսական կտրուկ զէնքը յաղթում է թրքական խուժանին, կընուաճի այս անգամ ևս մեր հայրենիքի յանդուգն թշնամուն։

Ամբողջ ռուս ժողովրդի հետ միասին Մենք աննկուն կերպով հաւատում ենք, որ Թիւրքիայի ներկայ անմիտ միջամտութիւնը պատերազմական գործողութիւններին՝ միայն կը փութացնի իրեն համար ճակատագրական անդքերի ընթացքը և Ռուսաստանի համար ճանապարհ կը բանայ լուծելու նախնիք-

Ներից իրեն աւանդուած խնդիրները Սև ծովի ափերում։

Տրուած է Ցարսկոյէ Սելոյում հոկտեմբերի քսաներորդ օրը, Քրիստոսի Ծննդեան հազար ինն հարիւր տասնիչորսերորդ, իսկ Մեր Թագաւորութեան քսաներորդ տարուն։

Իսկականի վրայ Նորին Կայսերական Մեծութեան Սեփական ձեռքով ստորագրուած է՝

ՆԻԿՈԼԱՅ

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ

ՀԵՌԱԳԻՐԸ

ԱԶԳԻՍ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Վեհափառ Հայրապետը Կովկասի Տ. Փոխարքայի միջոցով ստացել է հոկտեմբ. 25-ին հետեւեալ հեռագիրը.

Էջմիածին, Նորին Սրբութեան ամենայն Հայոց Կաթուղիկոսին.

Յայտնում եմ Ձերդ Սրբութեան, որ Ձեր և Ձեզ հաւատացած հոգևորականութեան ու հօտի ամենահպատակօրէն զգացմունքների առթիւ ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԻՆԸ բարեհաճել է հեռագրով պատասխանել հետեւեալ բովանդակութեամբ.

"Յանձնարարում եմ Ձեզ, Կոմս, հաղորդել ամենայն Հայոց Կաթուղիկոսին, Նորան հաւատացած հոգևորականութեան և Նորա հօտին իմ սրտագին շնորհակալութիւնը աղօթքների և ինձ արտայայտած հաւատարիմ հպատակ անձնուիրութեան զգացմանց համար։"

ԳԵՆԵՐԱԼ ԱԴԻՒՏԱՆՏ ԿՈՄՍ ՎԱՐԱՆՑՈՎ-ԴԱՇԿՈՎ։